# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**<<ԴՀՄՖՀԿԲԸԱՀԾՁԲ-16/2>> ծածկագրով բանակցային ընթացակարգ առանց հայտարարության ավիատապսարկման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

31.03.2016 թ. ժամը 10:00

**Մասնակցում էին՝**

Պատասխանատու ստորաբաժանում ներկայացնող՝
Ֆեդերացիայի գլխավոր քարտուղար՝ Ա. Այվազյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Մովսիսյան

<<Քվանտ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Ալավերդյան

<<Տրինիդատ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Դերբալյան

## Հայտերի բացման և գնահատման մասին

**1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

1.1 <<ԴՀՄՖՀԿԲԸԱՀԾՁԲ-16/2>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Հասցեները |
|---|---|---|
| 1 | <<Քվանտ>> ՍՊԸ | ք. Երևան, Մաշտոցի 15 |
| 2 | «Տրինիդատ» ՍՊԸ | ք. Երևան, Զաքյան 6/36 |

**2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

2.1 <<Քվանտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

2.2 «Տրինիդատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

**3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1 <<Քվանտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը:

.2 «Տրինիդատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

4.1 <<Քվանտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին

4.2 «Տրինիդատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին

**5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափաբաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | |
|---|---|---|---|
| | | <<Քվանտ>> ՍՊԸ | «Տրինիդատ» ՍՊԸ |
| | | Առաջարկված գները, ՀՀ դրամ | |
| 1 | 2508000 | 1972300 | 4459000 |

**6. Գնման գործընթացին ներկայացված հայտերի գնահատման արդյունքների մասին**

6.1 Հաստատել գնման գործընթացին ներկայացված հայտի գնահատման արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի գնահատման չափանիշը | Մասնակցի անվանումը և գնահատման արդյունքները | |
|---|---|---|---|
| | | 1 չափաբաժին | |
| | | <<Քվանտ>> ՍՊԸ | «Տրինիդատ» ՍՊԸ |
| 1 | Կազմված և ներկայացված հայտի համապատասխանությունը հրավերի պահանջներին | համապատասխանում է | համապատասխանում է |
| 2 | Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը | չի համապատասխանում | համապատասխանում է |
| 3 | Հայտով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին | համապատասխանում է | համապատասխանում է |
| | **Ընդհանուր գնահատականը** | **անբավարար** | **բավարար** |

6.2 Հիմք ընդունելով 6.1 կետով արձանագրված գնահատման արդյունքները՝ մերժել <<Քվանտ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

## 7. Միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին

7.1 Հրավերին համապատասխանող հայտ ներկայացրած, սակայն գնային առաջարկը տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցած մասնակցի հետ առաջարկված գնի նվազեցման նպատակով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը, կազմակերպել միաժամանակյա բանակցություններ, մասնավորապես.

| Չափաբաժին | Ապրանքի անվանումը | Մասնակիցների անվանումը | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| | | <<Տրինիդատ>> ՍՊԸ | |
| | | Մասնակցի հայտով առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
| 1 | Ավիասպասարկման ծառայություն | 4459000 | 2508000 |

7.2 Մասնակցի առաջարկված գների նվազեցման նպատակով յուրաքանչյուր չափաբաժնի շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանել ժամանակահատված 10 րոպե տևողությամբ:

7.3 Վերահաստատել մասնակցի կողմից հայտով ներկայացված գինը, հաշվի առնելով, որ ԲԸԱՀ գնման գործընթացի մասնակցի առաջարկված գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված 10 րոպե ժամանակահատվածի ընթացքում մասնակցի կողմից գնի վերաբերյալ նոր առաջարկ չի եղել:

7.4 Հիմք ընդունելով 7.3 կետը և հաշվի առնելով, որ մասնակցի գինը գերազանցում է գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ մերժել <<Տրինիդատ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

## 8. Գնման գործընթացի արդյունքների մասին.

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի <<ԴՀՄՖՀԿԲԸԱՀԾՁԲ-16/2>> ծածկագրով գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմքով:

**Ֆեղերացիայի գլխավոր քարտուղար՝** ---------------------------- Ա. Այվազյան

**Քարտուղար** ---------------------------- Ն. Մովսիսյան

<<Քվանտ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ ---------------------------- Գ. Ալավերդյան

<<Տրինիդատ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ ---------------------------- Ն. Դերբալյան